ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. ՀՀ Վայոց ձորի մարզի միջտարածաշրջանային համագործակցության

ՀՀ Վայոց ձորի մարզը մեծապես արժևորում է միջտարածաշրջանային համագործակցությունը՝ այն համարելով միջպետական համագործակցության կարևոր բաղադրիչ: Կատարված աշխատանքների շնորհիվ միջտարածաշրջանային մեր գործընկերների հետ իրականացվում է ամուր, արդյունավետ գործընկերություն՝ հիմնված փոխադարձ հարգանքի և ընդհանուր արժեքների վրա, ինչի մասին լավագույնս հավաստում են արձանագրված արդյունքները և հաջողությունները:

2022թ. հունիսին պաշտոնական այցով ՀՀ Վայոց ձորի մարզում էր գտնվում ՌԴ Արխանգելսկի մարզի պատվիրակությունը՝ Արխանգելսկի մարզի նահանգապետի տեղակալ և Արխանգելսկի մարզի կառավարության վարչակազմի ղեկավար Վահե Պետրոսյանի գլխավորությամբ: Այցի շրջանակներում հունիսի 9-ին Ջերմուկ քաղաքում ստորագրվեց «ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և ՌԴ Արխանգելսկի մարզի կառավարության միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին համաձայնագրի իրականացման գործողությունների ծրագիրը (2022-2024 թվականների համար)»՝ ուղենշելով գործընկեր մարզերի միջև փոխգործակցության ամրապնդմանն ուղղված քայլերն ընթացիկ և հաջորդող երկու տարիների համար:

Նույն օրը տեղի ունեցավ «Վայոց ձորի և Արխանգելսկի մարզերի համագործակցության միավորում» շահույթ չհետապնդող կազմակերպության խորհրդի հինգերորդ նիստը, որի ընթացքում քննարկվեցին համատեղ ծրագրերի արդյունքներն ու համագործակցության հեռանկարները, գործունեության ընդլայնման հետ կապված հարցեր: Համատեղ նիստի արդյունքում հաստատվեց նաև խորհրդի նորացված կազմը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանի նախագահությամբ:

Համագործակցության արդյունքում և ի կատարումն գործողությունների ծրագրի դրույթների, ինչպես նաև հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների, որոնք նպատակաուղղված են բարձրացնել երկու գործընկեր մարզերի միջև համագործակցությունը կրթության ոլորտում, 2022թ. հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 1-ը ՌԴ Արխանգելսկի մարզից ՀՀ Վայոց ձորի մարզ է այցելել 4 աշակերտից և 1 ուղեկցող անձից կազմված խումբ՝ ամառային ճամբար այցելելու նպատակով: Փոխանակման ծրագրի շրջանակներում հոկտեմբերի 29-ին Վայոց ձորի մարզի երիտասարդական պատվիրակությունը (10 աշակերտ և մեկ ուղեկցող անձ) պատասխան այցով մեկնել է Արխանգելսկի մարզ: Նախաձեռնության նպատակն էր հնարավորություն տալ երկու գործընկեր մարզերի երեխաներին ծանոթանալ միմյանց մշակույթին և ավանդույթներին, կրթական համակարգին, ընդարձակել մտավոր հորիզոնները և պարզապես ստեղծել անկրկնելի հիշողություններ ողջ կյանքի համար:

Բարձր գնահատելով հաստատված բարեկամական հարաբերությունները, վստահությամբ կարելի է նշել, որ լայնածավալ աշխատանքի շնորհիվ ամրագրված հաջողությունները կրելու են շարունակական բնույթ՝ նոր հնարավորություններ ստեղծելով համագործակցության ողջ ներուժը բացահայտելու և նոր նախաձեռնություններով համալրելու համար:

Շարունակվել է համագործակցությունը նաև ՌԴ Նիժեգորոդի մարզի հետ: 2022թ. նախատեսվում էր Նիժեգորոդի պատվիրակության այցը Վայոց ձորի մարզ՝ նահանգապետ Գլեբ Նիկիտինի գլխավորությամբ, որի ընթացքում համագործակցության հուշագիր պետք է ստորագրվեր Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի և Նիժեգորոդի մարզի Կստովսկի մունիցիպալ շրջանի միջև՝ էլ ավելի ամրապնդելով գոյություն ունեցող միջտարածաշրջանային ամուր փոխգործակցությունը: Սեպտեմբերի 13-14-ին սանձազերծված ադրբեջանական ագրեսիայի հետևանքով պատվիրակությանը այցը և հուշագրի ստորագրման գործընթացը հետաձգվեց 2023թ:

2022թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ փոխվարչապետ Մեր Գրիգորյանի և ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկի գլխավորությամբ կայացավ «Հայ-ռուսական համագործակցություն. նոր մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային իններորդ համաժողովը, որին մասնակցել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզի պատվիրակությունը: Համաժողովի ընթացքում Վայոց ձորը նշվել է որպես մարզ, որը միջտարածաշրջանային համագործակցության շրջանակներում կարողացել է իրեն դրսևորել որպես վստահելի և հուսալի գործընկեր՝ իր գործընկեր մարզերի հետ ձևավորելով սեփական ավանդույթները»:

Հաշվետու տարվա ընթացքում քայլեր են ձեռնարկվել նաև ապակենտրոնացված համագործակցության աշխարհագրության ընդլայնման ուղղությամբ: Մասնավորապես մեծ ձեռբերում է Վայոց ձորի մարզի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Անհոյ նահանգի միջև միջմարզային բարեկամական հարաբերություններ հաստատելու նախաձեռնությունը, որի շրջանակներում կողմերի միջև արդեն 2023թ. կստորագրվի «Մտադրությունների մասին նամակ»: Ստեղծված համագործակցության շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր և Անհոյ նահանգի Հեյֆեյ քաղաքների միջև կնքել քույր քաղաքներ հռչակելու վերաբերյալ համաձայնագիր:

2022թ. ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցություն հաստատել նաև Վայոց ձորի Եղեգնաձոր և Լեհաստանի Հանրապետության Զաբժե և Իտալիայի Հանրապետություն Բիշելիե քաղաքների միջև:

Վայոց ձորի մարզը մշտապես կարևորել է սփյուռքահայերի, սփյուռքի կառույցների և հայկական համայնքների հետ աշխատանքի դերը, ինչպես Հայաստան-Սփյուռք գործակցության, այնպես էլ միջտարածաշրջանային համագործակցության ամրապնդման և

զարգացման գործում, որի արդյունքում ամուր կապեր են հաստատվել արտասահմանում գտնվող հայ համայնքների և կառույցների հետ:

2022թ.-ին համագործակցության մասին հուշագիր է կնքվել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և «Ֆրանսիական լույս» ասոցիացիայի միջև՝ հաշվի առնելով կողմերի միջև մարզի առողջապահության և մարդասիրական գործունեության ոլորտում համագործակցության ընդլայնման փոխադարձ պատրաստակամությունը: Համագործակցության նոր փուլի մեկնարկի, ինչպես նաև հայ-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30 ամյակի կապակցությամբ Եղեգնաձոր քաղաքում կազմակերպվեց «Ֆրանսիայի օրերը Վայոց ձորում» խորագրով միջոցառում:

Համագործակցության շրջանակներում, մասնավորապես ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ սեպտեմբերի 13-14-ին սանձազերծված ադրբեջանական ագրեսիայից հետո, տեղի է ունեցել ասոցիացիայի ներկայացուցիչների այց և առաջին օգնության համար նախատեսված դեղորայքի փոխանցում մարզի առողջապահական հաստատություններին:

Շարունակվում է ակտիվ համագործակցությունը «Դոմ Մոսկվի» Երևանում մոսկովյան մշակութագործարարական կենտրոնի հետ, որի արդյունքում աշխատանքներ են տարվում Եղեգնաձոր քաղաքում «Ռուսական կենտրոն» հիմնելու ուղղությամբ:

2021 թ. ընթացքում Վայոց ձորի մարզպետարանը համագործակցել է նաև Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, կազմակերպությունների, ինչպես նաև այլ երկրներից ժամանած պատվիրակությունների հետ:

- ԵՄ Տեխնիկական գնահատման առաքելության այցը Վայոց ձորի մարզ:
- ՌԴ Դաշնային Ժողովի Պետական Դումայի ԱՊՀ երկրների, եվրասիական ինտեգրման և հայրենակիցների հետ կապերի կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Կ. Տայսաևի գլխավորած պատվիրակության այցը:
- Կարիքների գնահատման ԵԱՀԿ առաքելության այցը՝ ԵԱՀԿ-ում նախագահող Լեհաստանի ներկայացուցիչ գնդապետ Ռոբերտ Արկադիուշ Տկաչիկի գլխավորությամբ: